BACCALAURÉATS GÉNÉRAL ET TECHNOLOGIQUE

SESSION 2016

ARMÉNIEN

MARDI 21 JUIN 2016

LANGUE VIVANTE **2**

Série **L –** Durée de l'épreuve : **3 heures** – coefficient : **4**

Séries **ES-S** – Durée de l'épreuve : **2 heures** – coefficient : **2**

Séries **Hôtellerie** - **ST2S et STMG** – Durée de l'épreuve : **2 heures** – coefficient : **2**

Séries **STI2D, STD2A, STL** – Durée de l'épreuve : **2 heures** – épreuve facultative

Le candidat choisira le questionnaire correspondant à sa série.

Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions de l'épreuve pour laquelle il compose.

L'usage des calculatrices électroniques et du dictionnaire est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 8 pages numérotées de 1/8 à 8/8.

Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Սուրիահայեր. վերադարձ, որ չէին նախատեսած

Հրանդ Գալստեան
www.hetq.am

Յունիս 3, 2015

«Աշխատանքի կողմէն որ լաւ եղաւ, մենք նոյնիսկ չենք մտածեր դառնալ Սուրիայ, որով Սուրիան պատերազմէն վերջ առաջուան Սուրիան դժուար դառնայ: Իր ապահովութիւնը, իր ամբողջ լաւ կէտերը ինքը կորսնցուց: Ամէնէն կարեւոր բանը, որ մենք Սուրիայի մէջ ունեինք, ապահովութիւնն էր: Ադ ապահովութիւնը չեմ կարծեր՝ ետ դառնայ»: 2013-ի Յունուարին Հայաստան եկած Մարիա Պասմաճեանի համոզմունով՝ Սուրիա արդէն «անաստուած[1], անվախ» ծայրայեղականներն[2] են, որոնք նման չեն իրենց նախկին մուսուլման հարեւաններուն:

2011-էն առաջ Սուրիա կ՚ապրէր ազգութեամբ հայ 80 000 քաղաքացի, որոնց մեծ մասը՝ մօտ 60 000, Հալէպ քաղաքը: Սփիւռքի նախարարութեան[3] տուեալներով՝ այժմ Հայաստան կը գտնուին 12 հազարէն աւելի սուրիահայեր, որոնց մեծամասնութիւնը՝ Երեւան: Սուրիա սկիզբ առած քաղաքացիական պատերազմի[4] ընթացքին Հայաստան եկած սուրիահայերը միւսներէն կը տարբերին անով, որ այստեղ իրենց փախստական[5] չեն համարեր:

37 տարեկան Մարիան Հայաստան եկած է ամուսնին եւ երկու զաւակներուն հետ: Կը պատմէ, որ չէին նախատեսած Հայաստան գալ եւ մէկ ամիսով քրոջ մօտ՝ Տուպայ գացած էին. «Ըսինք՝ գոնէ մէկ ամիսով դուրս ելլենք, մենք մեզի մոռնանք»: Սակայն Հալէպ վերադառնալէ օրեր առաջ իմացած էին, որ օդակայանը փակ է: Այժմ երկու ամիս է՝

1 անաստուած – inhumain

2 ծայրայեղական – extrémiste

3 Սփիւռքի նախարարութիւն – ministère de la Diaspora

4 քաղաքացիական պատերազմ – guerre civile

5 փախստական – réfugié

հարազատներէն լուր չունին, քանի որ Հալէպ համացանց եւ հեռաձայնային կապ չկայ. «Միայն կը լսենք, որ լաւ են»:

Սուրիա բնակող ու աշխատող հայերու ապրելակերպը[6] շատ բաներով կը տարբերէր, այն ինչէն որուն հանդիպեցան Հայաստան: «Մեր մօտ ընտանիքին մէկ անդամը՝ հայրը, կ՛աշխատէր, 6-7 անդամով ընտանիքը շատ հանգիստ կապրէր, քիչ մըն ալ դրամ կը դիզէին»,- կը պատմէ Լենա Հալաճեան, որ 2012-ին Հայաստան գալէ ետք հիմնած է «Սուրիահայերու հիմնախնդիրները համակարգող կեդրոնը»[7]:

Հայաստան փոխադրուածներէն շատերը, ըստ իրեն, երկար ժամանակ ապրեցան այդ խնայողութիւններուն[8] շնորհիւ եւ աշխատանք չփնտռեցին, քանի որ յոյս ունէին վերադառնալ Սուրիա, ծանօթ չէին Հայաստանի, աշխատավարձքն ալ Սուրիա վաստակածէն քիչ էր: «Վերջը տեսան, որ աս երկիրը աս է, աշխատավարձքն ալ աս է, եթէ չաշխատին, ատ ալ չպիտի ստանան, ու հիմա բաւական մեծ թիւով կաշխատին, փառք Աստուծոյ»,- կ՛ըսէ Հալաճեան՝ նշելով հիմնական ոլորտները[9], որոնց մէջ Սուրիայէն տեղափոխուած մարդիկ կ՛աշխատին. ոսկերչութիւն, սպասարկման ոլորտ[10], թաքսիի ծառայութիւններ, ինքնաշարժներու վերանորոգում, ինչպէս նաեւ ուտեստեղէնի պատրաստում ու վաճառք:

Երբ եօթ ամիս առաջ Պետրոս Քիրազեանը վարձեց[11] մեթրոյի «Հանրապետութեան հրապարակ» կայանի անցումին[12] տաղաւարներէն[13] մէկը, ընդամենը 4-5 տաղաւարներ կային: Ամիսներու

6 ապրելակերպ – mode de vie

7 «Սուրիահայերու հիմնախնդիրները համակարգող կեդրոն» – Centre de coordination pour les problèmes des Arméniens de Syrie

8 խնայողութիւն – épargne

9 ոլորտ - domaine

10 սպասարկման ոլորտ – domaine des services

11 վարձել - louer

12 անցում – passage souterrain (ici : les passages souterrains près des stations de métro où on trouve plusieurs commerces)

13 տաղաւար – boutique, échoppe

ընթացքին նոր սուրիահայ ձեռնարկատէրեր[14] եկան, եւ տարածքը պայմանականօրեն անուանեցին «Հալէպի շուկայ»: Այս անցումէն Երեւանի բնակիչները յաճախ չեն օգտուիր: Պետրոսը, որ Սուրիայէն, Լիբանանէն ու Տուպայէն բերուած համեմներ ու սուրիական օճառ կը ծախէ կ՚ըսէ, որ իրենց գլխաւոր մտահոգութիւնը գովազդն[15] է՝ շուկայի գոյութեան մասին մարդիկ տեղեկացնելը:

14 ձեռնարկատէր – entrepreneur

15 գովազդ - publicité

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Սուրիա քանի՞ հայ կ՛ապրէր 2011-էն առաջ:
2. Հայերուն մեծամասնութիւնը Սուրիոյ ո՞ր քաղաքը կ՛ապրէր:
3. Մարիան որու՞ հետ Հայաստան եկած է:
4. Սուրիահայերէը Հայաստան ո՞ր ոլորտներուն մէջ կ՛աշխատին:
5. Ո՞ւր կը գտնուի Պետրոսին տաղաւարը:
6. Պետրոսը իր տաղաւարին մէջ ի՞նչ կը ծախէ:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Les candidats de la série L traitent les **DEUX** questions. (120 mots minimum pour chaque question)

Les candidats des autres séries traitent **UNE** question au choix. (150 mots minimum)

1. Լենա Հալաճեանը կը բացատրէ, թէ Սուրիոյ հայերուն ապրելակերպը տարբեր է Հայաստանի հայերուն ապրելաակերպէն: Բացատրեցէ՛ք, թէ ինչու:
2. Պետրոս Քիրազեանը կը բացատրէ, թէ իրենց հիմնական մտահոգութիւնը գովազդն է: Բացատրեցէ՛ք գովազդի դերը առեւտուրի մէջ:

Սիրիահայեր. վերադարձ, որ չէին նախատեսել

Հրանտ Գալստյան

www.hetq.am

3-ը հունիսի 2015

«Աշխատանքի առումով լավ եղավ, մենք նույնիսկ չենք մտածում վերադառնալ Սիրիա, որովհետեւ Սիրիան պատերազմից հետո առաջվա Սիրիան դժվար դառնա: Իր ապահովությունը, իր ամբողջ լավ կետերը ինքը կորցրեց: Ամենից կարեւոր բանը, որ մենք Սիրիայի մեջ ունեինք, ապահովությունն էր: Այդ ապահովությունը չեմ կարծում՝ ետ դառնա»: 2013-ի հունվարին Հայաստան եկած Մարիա Բասմաճյանի համոզմամբ՝ Սիրիայում արդեն «անաստված[1], անվախ» ծայրահեղականներն[2] են, որոնք նման չեն իրենց նախկին մուսուլման հարևաններին:

2011 թ.-ից առաջ Սիրիայում ապրում էր ազգությամբ հայ 80 հազար քաղաքացի, որոնց մեծ մասը՝ մոտ 60 հազարը, Հալեպ քաղաքում: Սփյուռքի նախարարության[3] տվյալներով՝ այժմ Հայաստանում է գտնվում 12 հազարից ավելի սիրիահայ, որոնց մեծամասնությունը՝ Երևանում: Սիրիայում սկիզբ առած քաղաքացիական պատերազմի[4] ընթացքում Հայաստան եկած սիրիահայերը մյուսներից տարբերվում են նրանով, որ այստեղ իրենց փախստական[5] չեն համարում:

37-ամյա Մարիան Հայաստան է եկել ամուսնու և երկու զավակների հետ: Պատմում է, որ չէին նախատեսել Հայաստան գալ և մեկ ամսով քրոջ մոտ՝ Դուբայ էին գնացել. «Ասացինք՝ գոնե մեկ ամսով դուրս գանք, մենք մեզ մոռանանք»: Սակայն Հալեպ վերադառնալուց օրեր առաջ իմացել էին, որ օդանավակայանը փակ է: Այժմ երկու ամիս է՝ հարազատներից լուր չունեն, քանի որ Հալեպում ինտերնետ, հեռախոսային կապ չկա. «Միայն լսում ենք, որ լավ են»:

[1] Անաստված – inhumain
[2] Ծայրահեղական – extrémiste
[3] Սփյուռքի նախարարություն – ministère de la Diaspora
[4] Քաղաքացիական պատերազմ – guerre civile
[5] Փախստական – réfugié

Սիրիայում բնակված ու աշխատած հայերի կենսակերպը[6] շատ բաներով էր տարբերվում նրանից, ինչին իրենք հանդիպեցին Հայաստանում: «Մեզ մոտ ընտանիքի մի անդամը՝ հայրը, աշխատում էր, 6-7 անդամից ընտանիքը շատ հանգիստ ապրում էր, մի քիչ էլ փող էին հավաքում»,- պատմում է Լենա Հալաճյանը, ով 2012-ին Հայաստան գալուց հետո հիմնել է «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոնը»[7]:

Հայաստան տեղափոխվածներից շատերը, ըստ նրա, երկար ժամանակ ապրեցին այդ խնայողությունների[8] հաշվին և աշխատանք չփնտրեցին, քանի որ հույս ունեին վերադառնալ Սիրիա, ծանոթ չէին Հայաստանին, աշխատավարձն էլ Սիրիայում վաստակածից քիչ էր: «Վերջը տեսան, որ այս երկիրը այս է, աշխատավարձն էլ այս է, եթե չաշխատեն, այդ էլ չպիտի ստանան, ու հիմա բավական մեծ թվով աշխատում են, փառք աստծո»,- ասում է Հալաճյանը՝ նշելով հիմնական ոլորտները, որտեղ Սիրիայից տեղափոխված մարդիկ աշխատում են. ոսկերչություն, սպասարկման ոլորտ[9], տաքսի ծառայություններ, ավտոմեքենաների վերանորոգում, ինչպես նաև ուտեստների պատրաստում ու վաճառք:

Երբ յոթ ամիս առաջ Պետրոս Քիրազյանը վարձեց[10] մետրոյի «Հանրապետության հրապարակ» կայարանի անցումի[11] տաղավարներից[12] մեկը, ընդամենը 4-5 տաղավարներ կային: Ամիսների ընթացքում նոր սիրիահայ ձեռնարկատերեր[13] եկան, և տարածքը պայմանականորեն անվանեցին «Հալեպի շուկա»: Այս անցումից Երևանի բնակիչները հաճախ չեն օգտվում: Պետրոսը, ով Սիրիայից, Լիբանանից ու Դուբայից բերված համեմունք ու սիրիական օճառ է վաճառում, ասում է, որ իրենց գլխավոր մտահոգությունը գովազդն[14] է՝ շուկայի գոյության մասին մարդկանց տեղեկացնելը:

---

[6] Կենսակերպ – mode de vie
7 «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» – Centre de coordination pour les problèmes des Arméniens de Syrie
[8] Խնայողություն – épargne
[9] Ոլորտ – domaine
[10] Վարձել - louer
[11] Անցում – passage souterrain (ici : les passages souterrains près des stations de métro où on trouve plusieurs commerces)
[12] Տաղավար – boutique, échoppe
[13] Ձեռնարկատեր – entrepreneur
[14] Գովազդ - publicité

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Քանի՞ հայ էր Սիրիայում ապրում 2011 թ-ից առաջ:
2. Սիրիայի ո՞ր քաղաքում էր ապրում հայերի մեծամասնությունը:
3. Ու՞մ հետ է Մարիան Հայաստան եկել:
4. Ո՞ր ոլորտներում են աշխատում սիրիահայերը Հայաստանում:
5. Որտե՞ղ է Պետրոսի տաղավարը:
6. Ի՞նչ է Պետրոսը վաճառում իր տաղավարում:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Les candidats de la série L traitent les **DEUX** questions. (120 mots minimum pour chaque question)

Les candidats des autres séries traitent **UNE** question au choix. (150 mots minimum)

1. Լենա Հալաճյանը նշում է, որ Սիրիայի հայերի կենսակերպը տարբեր է Հայաստանի հայերի կենսակերպից: Բացատրեք, թե ինչու:
2. Պետրոս Քիրազյանը նշում է, որ իրենց հիմնական մտահոգությունը գովազդն է: Բացատրեք գովազդի դերը առեւտրում: